ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2023 թվականի N 2150 - Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ» (ՇԺԵ-2) ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՌՈՒՍԱՏՈՄ ՍԵՐՎԻՍ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետի-րական ընկերությանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N 1597-Ա որոշման N 2 հավելվածով սահմանված ծրագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման և կատարման պլանով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության հետ մեկ անձից գնման ձևով կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

2. Սահմանել, որ

1) պայմանագրի գինը չի կարող գերազանցել 65 000 000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ